Ն. ՊԱԼՅԱՆ

(Հոգևոր ճեմարանի
Ա. դասարանի ուսանող)

ԱՐԱՐԱՏ

Ինչպես շքեղ մի հուշարձան Արարատյան ծաղկող դաշտում,
Արարատն է բարձրացել վեր, մի օր ուրախ, մի օր տրտում:
Ու դարերն են եկել-անցել, ու վարպետներ բյուր-բյուրավոր,
Բայց ոչ մեկը դեռ չի կերտել նման արձան մի փառավոր:
Բնությունն է նրան ինչպես մի վեհ տաճար խոյացրել վեր,
Եվ ամեն մի քարի վրա դրել է հույս ու դրել սեր:
Մեր ալեզարդ Մասիսն ի վեր մեր երազներն են մագլցել,
Դարեր ամբողջ նրա լանջին շինականներ երգ են հյուսել,
Նա տեսել է ժողովրդիս խոշտանգումնե՛ր աճավոր,
Եվ դառնացել է իր հոգին ու մոլեգնել գիշեր ու զոր:
Ու մինչ գետերը մեր վարար, հորդակոհակ ու փրփրալի,
Ծովն են վազել, ալիքներում իրենց խառնած այրուն ու դի,
Մասիսը մեր կանգնած հպարտ, որպես տիտան լայնաթիկունք,
Պահպանել է ժողովրդիս ու եղել է կյանքի ակունք:
Կանգնել է նա վահանի պես, կուրծքը տված մութ տարերքին,
Կայծակներն են շանթ տեղացել գրանիտյա նրա կրծքին,
Բայց մնացել է անսասան, տեսել է բյուր ավեր ու վիշտ,
Եվ կոտորած արյունավեժ ու շեների կրակը միշտ...
Սերունդներ են եկել անցել ու բանակներ աներազոր,
Բայց Մասիսը, Մասիսը ծեր, կանգնել է վեհ ու փառավոր:

. . . . . .